ԱՊՐԱՆՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N << ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/214-1>>

ք. Երևան «01» նոյեմբերի 2019թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է.Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Տեսակենտրոն» ՍՊԸ-ին, ի դեմս տնօրեն Ա. Անխչյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **20 633 000 (Քսան միլիոն վեց հարյուր երեսուներեք հազար) ՀՀ դրամ:** Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:[19]

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այնունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական)տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, սակայն այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Սույն պայմանագրով Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում է Երևան քաղաքապետարանի աշխատակազմի Մշակույթի վարչություն:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Երևանի քաղաքապետարան	«Տեսակենտրոն» ՍՊԸ
ք. Երևան, Արգիշտի փող. 1	ք.Երևան, Կասյան 12
Կենտրոնական գանձապետարան	Բանկ «Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900012000148	Հ/Հ 2050022154111001
ՀՎՀՀ 02593108	ՀՎՀՀ 00005974
Է.Կիրակոսյան _____	Կ.Մկրտչյան _____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 07 » նոյեմբերի 2019 թ. կնքված
ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/214-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ/ՀՀ դրամ

Հ/Հ	ԳՄԱ կոդ (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողի անվանումը և ծագման երկիրը	Ապրանքի*					մատակարարման		
				տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Միավորի գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
1	37311310/1	Ջութակ 1/4 Virtuso Student VSVI 1/4	Չինաստան Soundsation	Լարային աղեղնավոր դասական նվագարան: Ունի չորս լար՝ փոքր օկտավայի սոլ նոտա, առաջին օկտավայի ռե և լյա նոտաներ, երկրորդ օկտավայի մի նոտա: Գործիքի դեկաները փայտյա (վերևի դեկան՝ եղևնու, ներքևի՝ թխկենու), լարերի բարձրությանը համապատասխանեցրած և տեղադրված հենակով ,Չափը՝ 1/4: Նոր աղեղով,պատյանով և կանիֆոլով: 1 /մեկ/ տարվա երաշխիքային սպասարկում: Իտալական բրենդ արտադրված Չինաստանում:	հատ	48000	144000	3	ք. Երևան, Արգիշտի 1	3	պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օր հետո մինչև 25.12.2019թ
2	37311310/2	Ջութակ 2/4 Virtuso Student VSVI 2/4	Չինաստան Soundsation	Լարային աղեղնավոր դասական նվագարան: Ունի չորս լար՝ փոքր օկտավայի սոլ նոտա, առաջին օկտավայի ռե և լյա նոտաներ, երկրորդ օկտավայի մի նոտա: Գործիքի դեկաները փայտյա (վերևի դեկան՝ եղևնու, ներքևի՝ թխկենու), լարերի բարձրությանը համապատասխանեցրած և տեղադրված հենակով ,Չափը՝ 2/4: Նոր աղեղով,պատյանով և կանիֆոլով: 1 /մեկ/ տարվա երաշխիքային սպասարկում: Իտալական բրենդ արտադրված Չինաստանում:	հատ	48000	432000	9	ք. Երևան, Արգիշտի 1	9	պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օր հետո մինչև 25.12.2019թ
3	37311310/3	Ջութակ 3/4 Virtuso Student VSVI 3/4	Չինաստան Soundsation	Լարային աղեղնավոր դասական նվագարան: Ունի չորս լար՝ փոքր օկտավայի սոլ նոտա, առաջին օկտավայի ռե և լյա նոտաներ, երկրորդ օկտավայի մի նոտա: Գործիքի դեկաները փայտյա (վերևի դեկան՝ եղևնու, ներքևի՝ թխկենու), լարերի բարձրությանը համապատասխանեցրած և տեղադրված հենակով ,Չափը՝ 3/4: Նոր աղեղով,պատյանով և կանիֆոլով: 1 /մեկ/ տարվա երաշխիքային սպասարկում: Իտալական բրենդ արտադրված Չինաստանում:	հատ	49000	343000	7	ք. Երևան, Արգիշտի 1	7	պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օր հետո մինչև 25.12.2019թ

4	37311310/4	Ալտ Virtuso Student VIOVS 15 /39.3 CM/	Չինաստան Soundsation	Լարային աղեղնավոր դասական նվագարան: Ունի 4 լար, լարվածքը կվինտային է (փոքր օկտավայի դո, առաջին օկտավայի սոլ, ռե, երկրորդ օկտավայի լյա): Չափերը՝ (39.3 սմ): Գործիքի վերին դեկան պատրաստված է եղևնուց: Կողերը՝ ներքևի դեկան թխկու փայտից: Աղեղը՝ նոր,պատյանով : 1 /մեկ/ տարվա երաշխիքային սպասարկում: Իտալական բրենդ արտադրված Չինաստանում:	հատ	115000	920000	8	ք. Երևան, Արգիշտի 1	8	պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օր հետո մինչև 25.12.2019թ
5	37311350/1	Թավջութակ 1/4 Virtuso Student Plus VSPCE 1/4	Չինաստան Soundsation	Ջութակի ընտանիքի բասատենորային ռեգիստրի լարային աղեղնավոր դասական նվագարան. Ունի 4 լար, լարվածքը կվինտային է (մեծ օկտավայի դո և սոլ նոտաներ, փոքր օկտավայի ռե և լյա նոտաներ): Գործիքի վերևի դեկան՝ եղևնու փայտից: Լարերի բարձրությանը համապատասխանեցրած և տեղադրված հենակով: Չափը՝ 2/4: Նոր աղեղով,պատյանով և կանիֆոլով: 1 /մեկ/ տարվա երաշխիքային սպասարկում: Իտալական բրենդ արտադրված Չինաստանում:	հատ	245000	1225000	5	ք. Երևան, Արգիշտի 1	5	պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օր հետո մինչև 25.12.2019թ
6	37311350/2	Թավջութակ 2/4 Virtuso Student Plus VSPCE 2/4	Չինաստան Soundsation	Ջութակի ընտանիքի բասատենորային ռեգիստրի լարային աղեղնավոր դասական նվագարան: Ունի 4 լար, լարվածքը կվինտային է (մեծ օկտավայի դո և սոլ նոտաներ, փոքր օկտավայի ռե և լյա նոտաներ): Գործիքի վերևի դեկան՝ եղևնու փայտից: Լարերի բարձրությանը համապատասխանեցրած և տեղադրված հենակով: Չափը՝ 2/4: Նոր աղեղով,պատյանով և կանիֆոլով: 1 /մեկ/ տարվա երաշխիքային սպասարկում: Իտալական բրենդ արտադրված Չինաստանում:	հատ	255000	1275000	5	ք. Երևան, Արգիշտի 1	5	պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օր հետո մինչև 25.12.2019թ
7	37311350/3	Թավջութակ ¾ Virtuso Student Plus VSPCE 3/4	Չինաստան Soundsation	Ջութակի ընտանիքի բասատենորային ռեգիստրի լարային աղեղնավոր դասական նվագարան: Ունի 4 լար, լարվածքը կվինտային է (մեծ օկտավայի դո և սոլ նոտաներ, փոքր օկտավայի ռե և լյա նոտաներ): Գործիքի վերևի դեկան՝ եղևնու փայտից: Լարերի բարձրությանը համապատասխանեցրած և տեղադրված հենակով: Չափը՝ 3/4: Նոր աղեղով,պատյանով և կանիֆոլով: 1 /մեկ/ տարվա երաշխիքային սպասարկում: Իտալական բրենդ արտադրված Չինաստանում:	հատ	260000	1560000	6	ք. Երևան, Արգիշտի 1	6	պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օր հետո մինչև 25.12.2019թ

8	37311410/1	Ֆլեյտա SFL-11-OH	Չինաստան Soundsation	Փայտյա փողային դասական նվագարան: Պատրաստված մետաղից: Ֆլեյտա "C", արծաթապատ, ֆրանսիական համակարգ, 16 բաց կափույրով, (ռեզոնատորներով) մեխանիկան-"E": Բաղկացած է երեք մասից: Գլխամասի վրա՝ շրթնակալ: Ուսանողական:Պատյանով 1 /մեկ/ տարվա երաշխիքային սպասարկում: Իտալական բրենդ արտադրված Չինաստանում:	հատ	132000	660000	5	ք. Երևան, Արգիշտի 1	5	պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օր հետո մինչև 25.12.2019թ
9	37311200/1	Շեփոր STPGD-10	Չինաստան Soundsation	Պղնձյա փողային դասական նվագարան: Լարվածքը՝ Bb,չժանգոտվող առոպատից փականներ , Ուսանողական:Պատյանով և մոնշտուկով (7C), 1 /մեկ/ տարվա երաշխիքային սպասարկում: Իտալական բրենդ արտադրված Չինաստանում:	հատ	128000	512000	4	ք. Երևան, Արգիշտի 1	4	պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օր հետո մինչև 25.12.2019թ
10	37311380/1	Կլարնետ SCL-10	Չինաստան Soundsation	Փողային դասական նվագարան,ճօղակ, 17 ստեղն (կլապան), Abc մարմին, կլապանները նիկելապատ: Լարվածքը՝ Bb, «Ֆրանսիական» համակարգ,պատյանով: 1 /մեկ/ տարվա երաշխիքային սպասարկում: Իտալական բրենդ արտադրված Չինաստանում:	հատ	126000	630000	5	ք. Երևան, Արգիշտի 1	5	պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օր հետո մինչև 25.12.2019թ
11	37311370/1	Ֆագոտ MTP Mod.8110 Etude	Գերմանիա MTP	Փողային դասական նվագարան,20 ստեղն(կլապան) արծաթապատ, Abc մարմին, Ուսանողական, Պատյանով: 1 /մեկ/ տարվա երաշխիքային սպասարկում: Արտադրված է Գերմանիայում:	հատ	1495000	2990000	2	ք. Երևան, Արգիշտի 1	2	պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օր հետո մինչև 25.12.2019թ
13	37311370/2	Գալարափող SFH-FB4G	Չինաստան Soundsation	Պղնձյա փողային դասական նվագարան:Լարվածքը Bb, Իրանը դեղին պղինձ, ծածկույթը թափանցիկ լաք, կոնաձև 4 կափույրներով, մեխանիկան չժանգոտվող մետաղից: Պատյանով, 1 /մեկ/ տարվա երաշխիքային սպասարկում: Իտալական բրենդ արտադրված Չինաստանում:	հատ	585000	1755000	3	ք. Երևան, Արգիշտի 1	3	պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օր հետո մինչև 25.12.2019թ
15	37311370/3	Տուբա STUB-20G	Չինաստան Soundsation	Պղնձյա փողային նվագարան: (Bb) լարվածքով,չժանգոտվող պողպատե մխոցներ,ոսկե լաքապատ 3 պիստոն,պատյանով,1 /մեկ/ տարվա երաշխիքային սպասարկում: Իտալական բրենդ արտադրված Չինաստանում:	հատ	980000	2940000	3	ք. Երևան, Արգիշտի 1	3	պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օր հետո մինչև 25.12.2019թ

16	37311270/1	Քանոն Տեսակենտրոն ՍՊԸ	Հայաստան Տեսակենտրոն ՍՊԸ	Հայկական ազգային լարային կսմիթային նվագարան, դիատոնիկ լարվածքով: Հարթ սեղանիկի ձև ունեցող գործիք, 1/4-ը՝ երեսպատված կաշվե թաղանթով: Վերին դեկան պատրաստվում է կարմիր ընկուզենու, հաճարի, չինարենու փայտից: Վերին դեկայի վրա գտնվում են ձայնադարձիչները (ռեզոնատորային անցքեր): Ականջները փայտից: Կիսատոնային կամ մետաղական բռնակները (մանդալներ) դասավորված են զույգ-զույգ, պետք է լինեն հղկված: Ձայնածավալը՝ մեծ օկտավայի սոլ նոտայից մինչև 3-րդ օկտավայի ռե նոտա: Մեծ օկտավայի նոտաները դասավորված են զույգ լարերով, իսկ փոքր օկտավայից մինչև ձայնածավալի վերջը՝ եռակի լարերով: Լարերը՝ նեյլոնից կամ կապրոնից: Պատյանով:	հատ	380000	1140000	3	ք. Երևան, Արգիշտի 1	3	պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օր հետո մինչև 25.12.2019թ
18	37311270/3	Ուդ Տեսակենտրոն ՍՊԸ	Եգիպտոս Տեսակենտրոն ՍՊԸ	Հայկական ազգային լարային կսմիթային նվագարան՝ տարբեր սեգմենտներից սոսնձված ուռուցիկ տանձաձև իրանով, 1-3 ձևավոր ձայնանցքերով հարթ փայտե ծածկով, ունի կարճ առանց լադերի թևակ, գլխիկ, 2 զույգ կապրոնե լար, 3 զույգ և 1 կենտ փաթաթված մետաղալար: Մատնադաշտի երկարությունը՝ 19-20 սմ, մատնադաշտի հիմքից մինչև լարապահ (գրիֆ)՝ 38-40 սմ: Համերգային, պատյանով: Վարպետի աշխատանք՝ Եգիպտոս:	հատ	280000	2240000	8	ք. Երևան, Արգիշտի 1	8	պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օր հետո մինչև 25.12.2019թ
21	37311120/1	Բլուլ Տեսակենտրոն ՍՊԸ	Հայաստան Տեսակենտրոն ՍՊԸ	Փողային ազգային նվագարան (խրոմատիկ): Պետք է լինի ծիրանենու փայտից, բաղկացած է երկու մասից: Ձայնածավալը 2.5 օկտավ՝ առաջին օկտավայի ռեից մինչև երրորդ օկտավայի սոլը: Պատյանով: Գործիքը պատրաստված է հայ վարպետի կողմից:	հատ	42000	42000	1	ք. Երևան, Արգիշտի 1	1	պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օր հետո մինչև 25.12.2019թ
22	37311180/1	Սաքսոֆոն ալտ SALSX-20	Չինաստան Soundsation	Փողային նվագարան, ձայնալարումը Էb, իրանը դեղին պղինձ, ծածկույթը թափանցիկ լաք: Կոմպլեկտավորումը ամբողջական, համապատասխան պատյանով: 1 /մեկ/ տարվա երաշխիքային սպասարկում: Իտալական բրենդ արտադրված Չինաստանում:	հատ	320000	320000	1	ք. Երևան, Արգիշտի 1	1	պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օր հետո մինչև 25.12.2019թ

23	37311180/2	Սաքսոֆոն տենոր STNSX-20	Չինաստան Soundsation	Փողային նվագարան, ձայնալարումը Bb, իրանը դեղին պղինձ, ծածկույթը թափանցիկ լաք, մեխանիկան չժանգոտվող մետաղից, փողածայրով, կոմպլեկտավորումը ամբողջական, համապատասխան պատյանով: 1 /մեկ/ տարվա երաշխիքային սպասարկում: Իտալական բրենդ արտադրված Չինաստանում:	հատ	430000	860000	2	ք. Երևան, Արգիշտի 1	2	պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օր հետո մինչև 25.12.2019թ
27	37311100/1	Էլ. դաշնամուր KORG C-1AIR	Ճապոնիա KORG	Ստեղնաշարային թվային նվագարան: Ստեղների քանակը՝ 88 RH3,30ձայն,120պալիֆոնիա,բարձրախոսների հզորությունը2x25w: Երեք ոտնակով (педаль): Ցնցումների ինարավորությամբ, «սրանսպոզիս» համակարգ, բարձրախոսներով ելքի հնարավորություն, ստեղնաշարային կափարիչով, երգեհոնի հնչեղություն: Ճապոնական բրենդ,1 /մեկ/ տարվա երաշխիքային սպասարկում: Արտադրված է Ճապոնիայում:	հատ	645000	645000	1	ք. Երևան, Արգիշտի 1	1	պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օր հետո մինչև 25.12.2019թ

ԳՆՈՐԴ

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012000148
ՀՎՀՀ 02593108

Է.Կիրակոսյան----------
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Տեսակենտրոն» ՍՊԸ
ք.Երևան, Կասյան 12
Բանկ «Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022154111001
ՀՎՀՀ 00005974

Ա.Սնխչյան----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«01» նոյեմբերի 2019 թ. կնքված
ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/214-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
			դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
իրավիրով նախատեսված չափաբաժնի համարը	հոդված	անվանումը	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1-11,13, 15, 16, 18, 21, 22, 23, 27	5129	Երաժշտական գործիքներ	....	....	....	....	....	....	....	....	...	....	20633000	20633000	20633000

ԳՆՈՐԴ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012000148
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
«Տեսակենտրոն» ՍՊԸ
ք.Երևան, Կասյան 12
Բանկ «Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022154111001
ՀՎՀՀ 00005974

Ա.Սնիչյան _____
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 3
« 01 » նոյեմբերի 2019 թ. կնքված
ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/214-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են

Ապրանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 3.1
« 01 » նոյեմբերի 2019 թ. կնքված
ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/214-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 7
ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/214 ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան «01» Նոյեմբերի 2019թ.

«Տեսակենտրոն» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Արթուր Մնիսյանի (նույնականացման քարտ՝ 000811471, 18.01.2013թ, 004-ի կողմից), ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/214 ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի /այսուհետ՝ Պահանջագիր/ ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեֆորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան, իսկ պայմանագրով երաշխիքային ժամկետ սահմանված լինելու դեպքում՝ երաշխիքային ժամկետի ավարտին հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«Տեսակենտրոն» ՍՊԸ:
ՀՀ, ք.Երևան, Կասյան 12
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 205002215411100
ՀՎՀՀ 00005974
Տնօրեն՝ Ա.Մնիսյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

«01» Նոյեմբերի 2019թ.

1.	**ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ**[25]
2. Թիվ	
3.	Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.
4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն)՝ «Տեսակենտրոն» ՍՊԸ	
5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ	
6. Վճարողի հաշվի համար՝ 2050022154111001	
7. Վճարողի ՀՎՀՀ՝ 00005974	
8. Վճարողի ՀԾՀ՝	
9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ Երևանի քաղաքապետարան	
10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)	
11. Շահառուի ՀՎՀՀ՝ 02593108	
12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ Կենտրոնական գանձապետարան	
13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900015211429	
14.Գումարը (թվերով և բառերով)՝ 2063300 (երկու միլիոն վաթսուներեք հազար երեք հարյուր)	
15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)	
16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ, AMD	
17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի կատարման ապահովման համար)*	
18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝	
19. Վճարման պայմանները՝	<ակցեպտավորված վճարում>
20. Առդիր էջերի քանակը՝ էջ	
22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.Տ.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 21.բ. Կ.Տ.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.Տ. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.Տ. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

Լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»: